ՀՀ գիտության կոմիտեի (այսուհետև՝ Կոմիտե) 2019 թվականին կատարած աշխատանքների ամփոփ հաշվետվություն

1. **Գիտական քաղաքականության վարչություն**

Գիտական քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժին

1. Իրավական ակտեր/նախագծեր

- Մշակվել և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019 թ. նոյեմբերի 9-ի N 01/9.2.1/25946-19 գրությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման 2020-2024 թվականների գերակայությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:
- Մշակվել և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019 թ. նոյեմբերի 11-ի N 01/9.2.1/26048-19 գրությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Գիտության ոլորտ երիտասարդ կադրերի ներգրավման ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:
- Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2019 թ. մարտի 22-ի «ՀՀ 2020 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» N 289–Ա որոշումը և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված գիտության ոլորտի ՀՀ 2020-2022 թվականների ճշգրտված և 2022 թ. կողմնորոշիչ չափաքանակները՝ մշակվել է ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի ու Կոմիտեի 2020-2022 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի հայտը:
- Մասնակցել է գիտական և գիտատեխնիկական բնագավառին վերաբերող «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման գործընթացին:

2. Գիտական ծրագրերի մրցույթների անցկացում

2.1 Շարունակվել է 2 գիտական ծրագրերի մրցույթների ֆինանսավորումը.

- Մինչև 2019 թ. մայիսի 31-ը շարունակվել է 2018թ. բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման մրցույթի 102 առավել բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների ֆինանսավորումը(2018 թվականի հուլիսի 1-ից մեկ տարի ժամկետով ամսական 166.680.0 հազ. դրամ):
- Մինչև 2019 թ. օգոստոսի 1-ը շարունակվել է 2018 թ. բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարի տրամադրման մրցույթի 22 առավել բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների ֆինանսավորումը (2018 թվականի հուլիսի 1-ից մեկ տարի ժամկետով ամսական 90.000.0 հազ. դրամ):

2.2 Հայտարարվել և կազմակերպվել է գիտական ծրագրերի ֆինանասավորման 2 մրցույթ.

- ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019 թ. օգոստոսի 23-ի N 557-Ա/2 հրամանով կազմակերպվել է ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և (կամ) թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման մրցույթ՝ փաստաթղթային տարբերակով ներկայացվել է 220 հայտ: Ներկայումս արդյունքներն ամփոփման փուլում են:
- ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019 թ. օգոստոսի 23-ի N 557-Ա/2 հրամանով կազմակերպվել է ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և (կամ) թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարի տրամադրման մրցույթ՝ փաստաթղթային տարբերակով ներկայացվել է 69 հայտ: Ներկայումս արդյունքներն ամփոփման փուլում են:

3. Պայմանագրեր/համաձայնագրեր

➢ 2018թ. բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման մրցույթի ֆինանսավորման երաշխավորված 102 գիտական թեմաների ղեկավարներին հավելավճարի տրամադրման նպատակով նախապատրաստվել և 2019թ. գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) և Կոմիտեի գլխավոր քարտուղարի միջև կնքվել են թվով 27 համապատասխան պայմանագրերին կից 27 համաձայնագրեր:

➢ 2018 թ. բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) ֆինանսավորման երաշխավորված 22 գիտական թեմաների ղեկավարներին հավելավճարի տրամադրման նպատակով նախապատրաստվել և 2019թ. գիտական կազմակերպության (բուհի) տնօրենի (ռեկտորի) և Կոմիտեի գլխավոր քարտուղարի միջև կնքվել են թվով 14 համապատասխան պայմանագրերին կից 14 համաձայնագրեր:

4.Այլ ընթացիկ աշխատանքներ

➢ ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2017-2020 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման միջոցառումների և Հայագիտության ոլորտի զարգացման 2012-2025 թթ. ռազմավարությանը և դրա իրականացման միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ կազմվել են հաշվետվություններ և ներկայացվել ՀՀ վարչապետի աշխատակազմ:

➢ Այլ գերատեսչություններից, կազմակերպություններից, քաղաքացիներից ստացված գրությունների և դիմումների պատասխանների պատրաստում:

Գիտական արդյունքի առևտրայնացման և ինովացիոն ծրագրերի բաժին

➢ Ամփոփվել են 2018թ. երկրորդ կիսամյակի ընթացքում (2018թ. հուլիսի 31-ի ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահի N 33-Ա/Ք հրաման) կազմակերպված գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթին ներկայացված հայտերի գիտական փորձաքննության արդյունքները և պատրաստվել են շահառու գիտական թեմաների ղեկավարների հետ կնքվող «գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագրերը: 2019թ. մարտից սկսվել է մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված կիրառական նախագծերի ֆինանսավորումը: Վերոնշյալ մրցույթի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են՝

➢ Շարունակվել են 2018 թ. մարտին կազմակերպված ՀՀ գիտության կոմիտեի և Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի հետ համատեղ կիրառական հետազոտությունների նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ԲՀ ԳՏՊԿ - 2018» միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված 4 կիրառական նախագծերի ֆինանսավորումը՝ ՀՀ պետական բյուջեի «Միջազգային գիտական համագործակցության» ծախսային ծրագրի ֆինանսավորման շրջանակներում: Ֆինանսավորումը սկսվել է 2019 թվականի հունվարից: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018 թ. դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման N 5 հավելվածի N 8.1 աղյուսակով նախատեսված «Միջազգային գիտական համագործակցության» միջոցառման իրականացնման համար տրամադրված գումարը՝ շահառու նախագծերի ղեկավարների հետ կնքվել են համաձայնագրեր **«**ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ԲՀ ԳՏՊԿ - 2018**»** միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված ծրագրի իրականացման համար ՀՀ պետական բյուջեի ֆինանսական միջոցներից տրամադրվող գումարների օգտագործման մասին պայմանագրերի գինը փոխելու վերաբերյալ: Մշակվել է **«**ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ԲՀ ԳՏՊԿ - 2018**»** միջազգային մրցույթի շրջանակներում իրականացվող ծրագրերի ընթացիկ հաշվետվության ձևը:

➢ Շարունակվել են ՀՀ գիտության կոմիտեի և Ռուսաստանի Դաշնության «Գիտության և տեխնիկայի ոլորտում փոքր ձեռնարկությունների զարգացմանն աջակցության հիմնադրամի» միջև ստորագրված (2016թ. հունիս) Համագործակցության մասին» համաձայնագրի շրջանակներում կազմակերպված և 2018 թ. ապրիլից

իրականացվող կիրառական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ – ՌԴ ԻԱՀ - 2017» հայ-ռուսական մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված կիրառական նախագծերի ֆինանսավորումը՝ ՀՀ պետական բյուջեի «Միջազգային գիտական համագործակցության» ծախսային ծրագրի ֆինանսավորման շրջանակներում: 2019թ. ապրիլին ընդունվել են իրականացվող ծրագրերի ընթացիկ հաշվետվությունները:

- 2019թ. մայիսին ՄԱԿ Եվրոպական տնտեսական հանձնաժողովի հետ համատեղ կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում՝ Հայաստանում գիտական, գիտատեխնիկական և ինովացիոն գործունեության, ինչպես նաև ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի կողմից մշակվող տարածաշրջանային ինովացիոն քաղաքականության ընդհանուր նկարագրի մասին զեկույցի վերաբերյալ:
- 2019թ. նոյեմբերին Կոմիտեում կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում «ADWISERS» միջազգային կազմակերպության ղեկավարի, ներկայացուցիչների և հայաստանյան գիտական համայքի մասնակցությամբ: Քննարկումը նվիրված էր գիտաինովացիոն ոլորտում միջազգային համագործակցության ուղղություններին և հնարավորություններին:
- Կազմակերպվել են քննարկումներ, պատրաստվել են գրություններ և տրամադրվել կարծիքներ ԱՊՀ մասնակից պետությունների ինովացիոն ոլորտում մինչև 2020թ. համագործակցության միջպետական ծրագրի իրականացմանն ուղղված միջոցառումների, մինչև 2020թ. ԱՊՀ մասնակից պետությունների միջտարածաշրջանային և միջսահմանային համագործակցության հայեցակարգի, մինչև 2030թ. ԱՊՀ տնտեսական զարգացման ռազմավարության նախագծի, ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի որոշման նախագծերի, ԱՊՀ գործադիր կոմիտեի որոշման նախագծերի վերաբերյալ:
- Տրամադրվել են կարծիքներ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում մշակված և ընդունված հայեցակարգերի նախագծերի, գիտահետազոտական աշխատանքների իրականացման ծառայությունների ոլորտում համատեղ գործունեության ու ադմինիստրատիվ համագործակցության մասին համաձայնագրերի և այլ իրավական ակտերի վերաբերյալ: ԵԱՏՄ անդամ պետությունների անձանց մուտքը սահմանափակող դրույթների սահմանման և վերացման նպատակով իրականացվել է հարցում գիտահետազոտական աշխատանքների իրականացման ոլորտում ծառայությունների միասնական շուկայի մասնակիցների համար:
- Հայ-բելառուսական երկկողմ իրավա-պայմանագրային դաշտի գույքագրման շրջանակներում իրավա-պայմանագրային դաշտի արդիականացման և երկու պետությունների միջև կնքված փաստաթղթերի ցանկն ու դրանց կարգավիճակը հստակեցնելու նպատակով պատրաստվել է Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության կառավարությունների միջև կնքված համաձայնագրերի և ստորագրված փաստաթղթերի վերաբերյալ համապատասխան ցանկ և տեղեկատվություն:

Գիտական տեղեկատվության և վերլուծության բաժին

- ՀՀ կառավարության 2019թ. մայիսի 16-ի N 650-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի» 171 կետի 1-ին ենթակետի կատարումն ապահովելու նպատակով՝

1) մշակվել և ՀՀ ԿԳ նախարարի 23.04.2019թ. N 390-Ա/2, հրամանով հաստատվել են «Գիտական կամ գիտատեխնիկական պետական կազմակերպությունների գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունավետության գնահատման, տարակարգման և բազային ֆինանսավորման հիմնական սկզբունքները և չափանիշները»:

2) ստեղծվել և ներդրման փուլում է գիտական և գիտատեխնիկական գործունեության ընթացքում ստացված գիտական արդյունքների ներկայացման միասնական համակարգը: Նշված համակարգում տվյալների առցանց լրացման ժամկետ է սահմանվել ս. թ. հուլիսի 22-ը:

3) Կոմիտեի նախագահի 2019թ. հունիսի 25-ի N 22-Ա/Ք հրամանով գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման մեթոդաբանության մշակման նպատակով ստեղծել է աշխատանքային խումբ և հաստատվել է դրա կազմը:

4) իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ մեթոդաբանության մշակումից և տվյալների հավաքագրումից հետո ՀՀ գիտական կազմակերպությունների գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունավետության գնահատումն իրականացնելու համար՝ ՀՀ ԿԳ նախարարի 23.04.2019թ. N 390-Ա/2 հրամանով հաստատված սկզբունքներին և չափանիշներին համապատասխան:

➢ ՀՀ գիտական կազմակերպությունների անձնագրավորումը առցանց իրականացնելու նպատակով լրամշակվել է «ՀՀ գիտական կազմակերպության անձնագրի» ձևաթուղթը:

➢ Իրականացվել է 2018թ. ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող, գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող 96 գիտական կազմակերպությունների աշխատակիցների վերաբերյալ տվյալների հավաքագրում և մշակում, ստեղծվել է համապատասխան շտեմարան: Նշված շտեմարանը պարունակում է 6057 գիտական և վարչական աշխատողների մասին հետևյալ տվյալներ՝ անուն, ազգանուն, հայրանուն, գիտական կազմակերպություն, ծրագիր/թեմա, անձնագրային տվյալներ, ծննդյան տարեթիվ, աշխատավարձ, ինչպես նաև այլ գիտական կազմակերպություններում համատեղությամբ աշխատելու մասին տվյալներ: Գիտական կազմակերպությունների նշված 6057 աշխատակիցների թվաքանակից գիտաշխատողների թվաքանակը կազմում է 3951, որից դոկտորի գիտական աստիճան ունեն 657-ը, իսկ թեկնածուի գիտական աստիճան ունեն 1916-ը, վարչական աշխատակիցների թվաքանակը կազմում է 2106: Ըստ շտեմարանի կատարվել են համապատասխան վերլուծական աշխատանքներ:

➢ Իրականացվել է ՀՀ ռազմարդյունաբերական հանձնաժողովին կից ռազմատեխնիկական և գիտատեխնիկական (ՌՏԳՏ) խորհրդի քարտուղարության փաստաթղթաշրջանառության (որոշման նախագծեր, արձանագրություններ, հաշվետվություններ, կարծիքներ) վարումը: Կազմակերպվել է ՀՀ ռազմարդյունաբերական հանձնաժողովին կից ՌՏԳՏ խորհրդի և ենթահանձնաժողովների 8 նիստ: Ֆինանսավորման են երաշխավորել «Հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների» իրականացման նպատակով ներկայացված 21 հայտ:

➢ Ստեղծվել և վարվում է ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների բազային, նպատակային-ծրագրային և պայմանագրային (թեմատիկ) ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճանի համար հավելավճար ստացողների շտեմարան: Նշված շտեմարանը 2019 թ. դեկտեմբերի դրությամբ պարունակում է 588 դոկտորի և 1504 թեկնածուի մասին տվյալներ:

➢ ՀՀ հայագիտության ոլորտի զարգացման 2012-2025թթ. ռազմավարական ծրագրի ընթացքի վերաբերյալ տվյալների հավաքագրման նպատակով իրականացվել են հայագիտության ոլորտի գիտական կազմակերպությունների աշխատակիցների և ֆինանսական ծավալների մասին տվյալների հավաքագրում և մշակում: Հավաքագրված տվյալներով իրականացվել են համապատասխան վերլուծական աշխատանքներ:

➢ Համալրվել և թարմացվել են օտարերկրյա պետություններում բնակվող հայազգի գիտնականների մասին էլեկտրոնային շտեմարանի տվյալները: 2019 թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ շտեմարանը պարունակում է օտարերկրյա պետություններում բնակվող 468 հայազգի գիտնականների՝ ԱԱՀ-ն, երկրի, կազմակերպության, պաշտոնի վերաբերյալ տվյալներ:

2. Գիտական գործունեության կազմակերպման վարչություն

Գիտական ծրագրերի իրականացման աջակցության բաժին

1. <u>ՀՀ 2020 թ. պետական բյուջեի նախագծի և 2020-2022 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի մշակում.</u>

➢ ՀՀ գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառի 2020-2022թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և 2020 թ. պետական բյուջեի նախագծերի մշակման համար Կոմիտեում

ստեղծված աշխատանքային խմբին, համապատասխան բաժիններին տրամադրվել են տեղեկանքներ, աղյուսակներ, լրացուցիչ այլ տեղեկատվություն:

➢ ՀՀ 2020 թ. պետական բյուջեի գիտության մասը կազմելու շրջանակներում կազմակերպվել են բազային ֆինանսավորման 168 շարունակական և 18 նոր ծրագրերի հայտերի ընդունումը, տեղեկությունների շտեմարանի ստեղծման աշխատանքները:

2. *<u>Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման շրջանակներում դրամաշնորհային ծրագրերի իրականացման աջակցություն.</u>*

➢ Կազմակերպվել է 69 կազմակերպություններում 2018 թ. իրականացված 170 գիտական ծրագրերի տարեկան հաշվետվությունների ընդունումը, համապատասխան շտեմարանում արդյունքների մուտքագրումը, հաշվետվությունների հանձնման-ընդունման արձանագրությունների կազմումը, վերջիններիս առաքումը:

➢ կազմակերպվել են ՀՀ ԳԱԱ նախագահությունից և 42 կազմակերպություններից ներկայացված, 2019 թ. իրականացվելիք 168 գիտական ծրագրերի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման պայմանագրերի՝ առաջարկվող ձևին համապատասխանության, ամբողջականության ստուգման և վավերացման ներկայացնելու և առաքելու աշխատանքները:

➢ մշակվել է «Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթի կարգը»: Կազմակերպվել է գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթ:

➢ մշակվել է «Գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթի կարգը»: Կազմակերպվել է գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթ:

➢ մշակվել է «Գիտական գործուղման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթի կարգը»:

➢ մշակվել է «Գիտական միջոցառման կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթի կարգը» և «Երիտասարդ գիտնականների դպրոցի կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթի կարգը: Իրականացվել են 18 կազմակերպություններում 25 գիտական միջոցառման և 5 կազմակերպություններում 7 երիտասարդ գիտնականների դպրոցների ֆինանսավորման մասին պայմանագրերի կնքման աշխատանքները:

➢ մշակվել է «Գիտական հրատարակումների համար ֆինանսական աջակցություն տրամադրելու մրցույթի և գիտության մասսայականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու կարգը: 1 կազմակերպության հետ կնքվել է 1 գիտական հրատարակման համար ֆինանսավորման մասին պայմանագիր:

3. *<u>Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում դրամաշնորհային գիտական թեմաների իրականացման աջակցություն.</u>*

➢ իրականացվել են «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2019» մրցույթին 42 կազմակերպություններից ներկայացված 79 հայտերի թղթային տարբերակների ընդունման, առաջարկվող ձևին համապատասխանության, ամբողջականության ստուգման, տեղեկությունների շտեմարանի ստեղծման աշխատանքները:

➢ ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ հատկացումները փաստելու նպատակով կազմակերպվել է պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում իրականացվող 234 թեմաների ղեկավարների հետ պայմանագրի գինը փոփոխելու վերաբերյալ համաձայնագրերի կնքումը, առաքումը, սահմանված կարգով կազմակերպվել է 28 կազմակերպություններում իրականացվող 83 թեմաներում կատարողների փոփոխության և 13 կազմակերպություններում իրականացվող 23 թեմաներում նախահաշվի վերաբաշխման գործընթացը:

➢ կազմակերպվել է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Հասարակական գիտություններ» բնագավառի «Տնտեսագիտություն և գործարարություն» մասնագիտության թեմատիկ-ոլորտային գիտական թեմաների հայտերի ընտրության

մրցույթը»: Իրականացվել են մրցույթի հայտերի ընդունման, առաջարկվող ձևին համապատասխանության, ամբողջականության ստուգման, տեղեկությունների շտեմարանի ստեղծման աշխատանքներ: Ֆինանսավորման երաշխավորված 4 թեմաների ղեկավարների հետ կնքվել են ֆինանսական աջակցության տրամադրման մասին պայմանագրեր:

➢ նախապատրաստվել են 36 ասպիրանտական թեմաների ամփոփիչ հաշվետվություններ ներկայացնելու մասին 16 կազմակերպություններին, ինչպես նաև «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի «AREAL» գծային արագացուցչի վրա իրականացվող 5 թեմաների ամփոփիչ հաշվետվություններ ներկայացնելու մասին 4 կազմակերպություններին իրազեկման գրությունների նախագծերը:

4. <u>Գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային ֆինանսավորման շրջանակներում պետական ծրագրերի իրականացման աջակցություն.</u>

➢ կազմակերպվել է գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային ֆինանսավորման շրջանակներում 11 կազմակերպություններում 2018 թ. իրականացված 11 պետական ծրագրերի ընթացիկ և տարեկան հաշվետվությունների ընդունումը, համապատասխան շտեմարանում արդյունքների մուտքագրումը, հաշվետվությունների հանձնման-ընդունման արձանագրությունների կազմումը և առաքումը:

➢ կազմակերպվել են 10 կազմակերպություններից ներկայացված, 2019թ. իրականացվելիք 10 պետական ծրագրերի գիտական և գիտատեխնիկական գործունեության նպատակային-ծրագրային ֆինանսավորման պայմանագրերի՝ առաջարկվող ձևին համապատասխանության, ամբողջականության ստուգման և վավերացման ներկայացնելու և առաքելու աշխատանքները:

➢ ՀՀ 2020թ. պետական բյուջեի գիտության մասի կազմման շրջանակներում կազմակերպվել է 5 շարունակվող և 6 նոր պետական ծրագրերի հայտերի ընդունումը, տեղեկությունների շտեմարանի ստեղծման աշխատանքները:

Գիտական փորձաքննության կազմակերպման բաժին

1. ՀՀ ԳԿ կողմից անցկացվող մրցույթներին ներկայացված հայտերի գիտական փորձաքննության կազմակերպում.

➢ «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2019» մրցույթ (79 հայտ),

➢ «Հասարակական գիտություններ» բնագավառի «Տնտեսագիտություն և գործարարություն» մասնագիտության թեմատիկ-ոլորտային գիտական թեմաների հայտերի ընտրության» մրցույթ (18 հայտ),

➢ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի և Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտական խորհրդի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների հայ-իտալական համատեղ ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2019» միջազգային մրցույթ (18 հայտ),

➢ Հայաստանի հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի և հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՆ ԳԿ - ՀՀԲՀՀ - 2018» միջազգային մրցույթ (42 հայտ),

➢ Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման մրցույթ (233 հայտ),

➢ Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարի տրամադրման մրցույթին ներկայացված հայտերի փորձաքննություն (75 հայտ):

2. Կատարվել է Գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու դիմումներում

որպես նշանակալի ձեռքբերումներ ներկայացված նյութերի նույնակացում և գիտաչափական գնահատում (2019թ. գարնանային զորակոչ և 2019թ. աշնանային զորակոչ):

3. Շարունակվում են աշխատանքները Գիտական և գիտատեխնիկական փորձաքննական գործունեության իրականացման համար ընդունելի գրախոսվող գիտական պարբերականների ցանկի ձևավորման ուղղությամբ:

4. Շարունակվում են աշխատանքները ՀՀ գիտական և գիտատեխնիկական պետական կազմակերպությունների գործունեության ընթացքում ստացված գիտական արդյունքների ներկայացման միասնական համակարգ ներմուծված գիտական նույնականացման ուղղությամբ:

Միջազգային համագործակցության բաժին

1. ԱՊՀ, ԵԱՏՄ, ԵՄ համապատասխան կառույցների և օտարերկրյա պետությունների հետ գիտատեխնիկական ոլորտում համագործակցային համաձայնագրերի ու այլ միջազգային փաստաթղթերի նախագծերի մշակման, համաձայնեցման, լրամշակման, ստորագրման նախապատրաստման աշխատանքների իրականացում.

- Կազմակերպվել են «ՀՀ գիտության կոմիտեի և ՉԺՀ արտակարգ իրավիճակների կառավարման նախարարության Չինաստանի երկրաշարժերի վարչության միջև երկրաշարժերի հետազոտությունների ոլորտում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագրի նախագծի լրամշակման և ստորագրման նախապատրաստման աշխատանքները:
- կազմակերպվել են «ԱՊՀ մասնակից պետությունների՝ հիմնարար հետազոտությունների ոլորտում միջպետական հարաբերությունների համակարգման մասին» համաձայնագրի ներպետական համաձայնեցման աշխատանքները:
- կազմակերպվել են «ՀՀ ԿԳՄՍՆ և Ռուանդայի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների ազգային խորհրդի միջև գիտության, տեխնոլոգիաների և նորարարությունների ոլորտներում համագործակցության մասին» հուշագրի նախագծի մշակման աշխատանքները:

2. Եվրոպական հետազոտական տարածք ինտեգրմանն, ԵՄ Հորիզոն-2020 ծրագրին ՀՀ մասնակցության ապահովմանն ողղված աշխատանքների իրականացում

- Կազմակերպվել են ԵՄ Հորիզոն-2020 ծրագրին ՀՀ անդամակցության և WEB OF SCIENCE տվյալների շտեմարանին բաժանորդագրության համար ֆինանսական պարտավորությունների կատարման նպատակով համապատասխան զեկուցագրերի մշակման աշխատանքները:
- Միջազգային զեկույցների նախապատրաստման համար պատրաստվել են հաշվետվություններ՝ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի գործողությունների ծրագրով և Արևելյան գործընկերության համատեղ քաղաքականության նախաձեռնության շրջանակներում պատրաստված «20 թիրախային արդյունք մինչև 2020 թվականը» մոնիթորինգային փաստաթղթով գիտության և հետազոտությունների ոլորտում նախատեսված միջոցառումների ընթացքի վերաբերյալ:
- մշակվել և հաստատման է ներկայացվել Եվրոպական հետազոտական տարածքում Հայաստանի Հանրապետության հետազոտությունների և մշակումների բնագավառի ինտեգրման ճանապարհային քարտեզը:
- կազմակերպվել են ԵՄ «Հորիզոն 2020» քաղաքականության աջակցության գործիք ծրագրի շրջանակներում «Հատուկ աջակցություն Հայաստանին» նախագծի իրականացման նպատակով ԵՄ փորձագետների հոկտեմբերի 7-ից 9-ը Երևան աշխատանքային այցի շրջանակներում հանդիպումների և քննարկումների նախապատրաստական աշխատանքները:

3. Միջազգային համագործակցության ոլորտում ընթացող աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների ու տեղեկանքների մշակում ու ներկայացում.

➢ Մշակվել են գիտության ոլորտում միջազգային համագործակցային առկա կապերի, դրանց ամրապնդման և զարգացման, ինչպես նաև նոր համագործակցությունների հաստատման վերաբերյալ տեղեկանքներ:

4. Համատեղ գիտական ծրագրերի մրցույթների կազմակերպում, միջազգային գիտական, գիտակրթական կենտրոնների և լաբորատորիաների ստեղծմանն ուղղված աշխատանքների իրականացում.

➢ Կազմակերպվել են հայ-բելառուսական համագործակցության շրջանակում «ՀՀ ԳԿ - ՀՀԲՀՀ - 2018» միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված ծրագերի կատարման նպատակով պայմանագրերի կնքման աշխատանքները:

➢ կազմակերպվել են հայ-իտալական համագործակցության շրջանակում «ՀՀ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2019» միջազգային մրցույթի հայտատուներին խորհրդատվություն տրամադրելու, հայտերի ընդունման, իտալական կողմի հետ արդյունքների համաձայնեցման, արդյունքների հաստատման, ինչպես նաև ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի կատարման նպատակով պայմանագրերի կնքման աշխատանքները:

➢ մշակվել է Գիտական հետազոտությունների աջակցության եվրասիական ասոցիացիայի հետ համատեղ անցկացվող գիտական հետազոտությունների բազմակողմ ծրագրերի աջակցության միջազգային մրցույթի հրավերի փաթեթը:

➢ կատարվել են «ՀՀ ԳԿ - ՀՀԲՀՀ - 2016» և «ՀՀ ԳԿ - ԳԿՀԴՆ – 2016» միջազգային մրցույթների ամփոփիչ հաշվետվությունների ընդունման, տվյալների բազայում մուտքագրման և արդյունքների ամփոփման աշխատանքները:

5. Աջակցություն Կոմիտեի գործունեության հետ առնչվող տեղեկատվական նյութերի պատրաստման, զանգվածային լրատվական միջոցներով Կոմիտեի գործունեության լուսաբանման և կայքի սպասարկման աշխատանքներին.

➢ ՀՀ արտաքին գործերի նախարարությունից, միջազգային կառույցներից ստացված միջազգային գիտաժողովների և միջոցառումների մասին տեղեկատվությունը, ինչպես նաև միջազգային մրցույթներին առնչվող փաստաթղթերը ՀՀ գիտության կոմիտեի կայքում զետեղելու նպատակով նախապատրաստվել են համապատասխան զեկուցագրեր:

3. Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժին

Իրականացվել է Կոմիտեի հաշվապահական հաշվառման վարումը, ապահովվել է Կոմիտեի գործունեության բնականոն ընթացքը: Իրականացվել են նաև Կոմիտեի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված անհրաժեշտ կոմունալ, կենցաղային, գրասենյակային, վարչական, տրանսպորտային և այլ ծեռքբերումների հետ կապված հաշվապահական ձևակերպումներ ու վճարումներ: Կոմիտեի ապարատի տարեկան նախահաշիվը կազմում է 190998,9 հազ. դրամ, որից 180776,3 հազ. դրամն ուղղվել է աշխատակիցների աշխատանքի վարձատրությանը, իսկ մնացած 10222,5 հազ. դրամը այլ ընթացիկ ծախսերին(կապ, էլ.էներգիա, կոմունալ, տրանսպորտային, տնտեսական, գրասենյակային, ծառայությունների մատուցման և այլ ծախսեր):

Գանձապետական համակարգի միջոցով գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների ֆինանսավորման իրականացման շրջանակներում կատարվել են.

1. գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ - 795500,0 հազ. դրամ.
2. գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների ենթակառուցվածքի պահպանում և զարգացում - 9372914.6 հազ. դրամ, որն իր մեջ բացի կազմակերպությունների պահպանման ծախսերից, ներառում է նաև գիտական գործուղումների (43 գիտական գործուղում՝ 11977.2 հազ. դրամ ընդհանուր ծավալով), գիտաժողովների (21 գիտաժողով՝ 14275.0 հազ. դրամ ընդհանուր ծավալով), գիտական փորձագետների վարձատրության (200-ից ավելի գիտական փորձաքննություն՝ 4800.0 հազ. դրամ

ընդհանուր ծավալով), միջազգային գիտական համագործակցության (6 ամառային դպրոց՝ 5354.4 հազ. դրամ ընդհանուր ծավալով), գիտական սարքերի և սարքավորումների արդիականացման (13 մրցույթներ՝ 442568.4 հազ. դրամ ընդհանուր ծավալով), միջազգային գիտական կառույցների անդամակցության (3 միջազգային կառույցների անդամակցության վճար՝ 1057321.9 հազ. դրամ ընդհանուր ծավալով) հետ կապված ծախսերը.

3. գիտական կադրերի պատրաստման և ասպիրանտների կրթաթոշակների տրամադրման հետ կապված ծախսերի փոխհատուցում - համապատասխանաբար 18606.7 և 29247.2 հազ. դրամ ընդհանուր ծավալով.

4. Ֆինանսավորվել են թեմատիկ մրցույթներով հաղթող ճանաչված 289 թեմատիկ խմբեր - 1403516.4 հազ. դրամ ընդհանուր ծավալով.

5. Ֆինանսավորվել են նաև նպատակային և ազգային արժեք ներկայացնող օբյեկտների ծրագրերով նախատեսված 19 կազմակերպություն - 125000.0 հազ. դրամ ընդհանուր ծավալով նպատակային և 820433.5 հազ. դրամ ընդհանուր ծավալով ազգային արժեք ներկայացնող օբյեկտների գծով.

4. Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին

- 2019 թ. փետրվարի 7-ին «Արմենպրես» լրատվական գործակալության մամուլի սրահում տեղի է ունեցել Կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի ասուլիսը՝ «Գիտության կոմիտեի գործունեության 2019թ. հիմնական ուղղությունները, նախատեսվող ծրագրերը, բուհերում գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման հարցերը» թեմայով: Արդյունքում զանգվածային լրատվամիջոցներով հրապարակվել է առնվազն 28 նյութ:
- 2019 թ. հուլիսի 25-ին «Արմենպրես» լրատվական գործակալության մամուլի սրահում տեղի է ունեցել Կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի ասուլիսը՝ «Կոմիտեի ընթացիկ տարվա առաջին կիսամյակի աշխատանքների ամփոփում» թեմայով: Արդյունքում զանգվածային լրատվամիջոցներով հրապարակվել է առնվազն 31 նյութ:
- Կազմակերպվել են 2019 թ. հունվարի 26-ին ՀՀ ԳԱԱ տեղի ունեցած, հայ-իտալական գիտական կապերի զարգացմանը նվիրված գիտաժողովի լուսաբանման աշխատանքները:
- Իրականացվել է մամուլի տեսության մոնիտորինգ: Կոմիտեի նախագահին են ներկայացվել մամուլի տեսության 40 զեկուցագրեր: Կազմվել է 2019թ. ընթացքում Կոմիտեի գործունեությանն առնչվող կարևորագույն նյութերի ցանկը, հաշվառվել է 181 հրապարակում, այդ թվում՝ 25 տեսանյութ և ձայնագրություն:
- Իրականացվել են Կոմիտեում լրագրողների հավատարմագրման գործընթացի հետ կապված աշխատանքներ, կազմվել է 2019 թ. համար հավատարմագրված լրագրողների մատյանը, տարածվել է 2020 թ. համար հավատարմագրում սկսելու մասին հայտարարությունը:
- Կազմակերպվել է «Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման 2020-2024թթ. գերակայությունները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի հանրային քննարկումը՝ նախագծի փաթեթը կոմիտեի կայքում, ֆեյսբուքյան էջում և ՀՀ արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (https://www.e-draft.am/projects/2141) հրապարակելու միջոցով:
- Ի կատարումն ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2019թ. փետրվարի 7-ի N 02/06.1/5520-2019 հանձնարարականի՝ ամեն ամիս ներկայացվել է տեղեկատվություն հաջորդ ամսվա ընթացքում սպասվող գիտության ոլորտի հիշարժան օրերի ու նշանավոր անձանց ծննդյան տարեդարձերի (հոբելյանների) վերաբերյալ, պատրաստվել է Գիտության օրվա կապակցությամբ ՀՀ վարչապետի ուղերձի նախագիծը:
- Կազմակերպվել է Կոմիտեի նախագահի մոտ քաղաքացիների ընդունելությունը: Ի կատարումն ՀՀ վարչապետի 2017 թ. սեպտեմբերի 8-ի N 02/21.6/20045-17 հանձնարարականի՝ ՀՀ վարչապետի

աշխատակազմ է ներկայացվել ամենամսյա տեղեկատվություն Կոմիտեում քաղաքացիներից ստացված դիմումների թվաքանակի և դրանց քննարկման արդյունքների մասին:

- Ստեղծվել են բաժնի գործառույթներից բխող վիճակագրական նյութերի, լուսանկարների, ձայնագրությունների և տեսագրությունների արխիվներ, որոնք տրամադրվել են լրատվամիջոցներին և շահագրգիռ այլ անձանց:
- Կոմիտեի կայքի լուրերի բաժանորդներին է առաքվել շուրջ 70 լուր և հայտարարություն: Բաժանորդագրվածների թիվը հասել է 448-ի: Վարվել է կոմիտեի ֆեյսբուքյան էջը, որի բաժանորդների թիվը հասել է 1637-ի:
- Կոմիտեի գործունեությունը լուսաբանելու նպատակով պատրաստվել և կայքում տեղադրվել է ավելի քան 150 լուր և հայտարարություն: Լրամշակվել և թարմացվել են կայքի բոլոր բաժինների նյութերը, ավելացվել են տեսանյութեր ու լուսանկարներ:

5. Անձնակազմի կառավարման բաժին

Նախապատրաստվել և հաստատման է ներկայացվել անձնակազմի կառավարման գծով Կոմիտեի նախագահի 28 և գլխավոր քարտուղարի 148 հրամանների նախագծեր, կատարվել են հաստատված հրամանների հաշվառման, իրազեկման, դրանց բնօրինակների պահպանության և առաքման աշխատանքներ: Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել է 11 քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կազմակերպման աշխատանքներ:

Իրականացվել է 34 քաղաքացիական ծառայողների պաշտոնների վերլուծություն, պաշտոնների նկարագրության կազմում, պաշտոնների գնահատում և նոր չափանիշներով գնահատված և դասակարգված պաշտոնների անվանացանկի և պաշտոնների անձնագրերի նախագծերի նախապատրաստում ու ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնության ներկայացում: Համաձայնությունը ստանալուց հետո հաստատվել է Կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայության անվանացանկը և պաշտոնների անձնագրերը, կատարվել են համապատասխան նշանակումներ:

Բաժնի կողմից ստացվել է 70, կազմվել և առաքվել է 65 գրություն, զբաղեցրած պաշտոնի և աշխատավարձի չափի մասին տեղեկանքներ են տրվել 25 աշխատակիցների:

6. Քարտուղարություն

Կոմիտեի ներքին գործավարության, մտից և ելից գրությունների, թղթակցությունների, նամակների, դիմումների և այլ գրությունների կազմակերպման շրջանակներում ստացվել է 3500 գրություն, որից 60 քաղաքացիներից ստացած դիմում, 18 Գիտական հետազոտությունների հայ-իտալական համատեղ ծրագրերի աջակցության մրցույթի հայտեր, 18 Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Հասարակական գիտություններ» բնագավառի «Տնտեսագիտություն և գործարարություն» մասնագիտության թեմատիկ-ոլորտային գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի հայտեր, 80 «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր-2019» մրցույթի գիտական թեմաների հայտեր, 69 ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) հավելավճարի տրամադրման մրցույթի հայտեր, 220 ՀՀ պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում անցկացված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման մրցույթի հայտեր, 600 հաշվետվություն և առաքվել է 750 գրություն: Ապահովվել է թղթակցությունների, նամակների, դիմումների և այլ գրությունների դասակարգումը, գրանցումը, հաշվառումը և շրջանառության կազմակերպումը: